**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-4/3-2**

ք. Երևան                                                                                                  06.10. 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Թրաք Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Ալեքսանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անքաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am hասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am hասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր առավելագույն գինը կազմում է 45,000,000 (Քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ

բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **33** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | **Թրաք Սերվիս» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 63շ բն 31 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 2478101719490000 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 01265214 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺ | Տնօրեն |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Հ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-4/3-2 պայմանագրի

## Գնման ժամանակացույց և տեխնիկական բնութագիր

### Գնման ժամանակացույց

| Հ/հ | Ծառայության անվանումը | Վերանորոգումների առավելագույն գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | ՀԻՆՈ 700ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) վերանորոգման ծառայություն | 45,000,000 |

Ծանոթություն.

1.Վերանորոգման ծառայությունների մատուցման ժամկետները կհաստատվեն ընկերություններում ավտոտեխնիկայի և ագրեգատների արատավորումից հետո՝ 5 օրյա ժամկետում :

2.Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2017թ. 4-րդ եռամսյակում,համաձայն հայտերի, բայց ոչ ուշ քան՝ 10.12.2017թ

### Տեխնիկական բնութագիր

| Հ/հ | Ծառայության անվանումը | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|
| 1 | ՀԻՆՈ 700 ավտոմեքենա (իր մոդիֆիկացիաներով) վերանորոգման ծառայություն | Համապատասխան «ՀԻՆՈ» գործարանի կողմից կազմված վերանորոգման և տեխնիկական սպասարկման ուղեցույցի |

Ծանոթություն.

1.Վերանորոգման ծառայությունները կիրականացվեն համապատասխան ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության կողմից տրամադրված կարգագրերի հիման վրա:

2.Վերանորոգման ծառայությունները իրականացնելիս պատասխանատու ստորաբաժանման կողմից կարող են տրամադրվել պահեստամասեր:

3. Հիմնական նորոգում անցած ավտոմեքենաներին և ագրեգատներին /շարժիչ, փոխանցման տուփ, կամրջակ և այլն/ պետք է տրվի շահագործման երաշխիքային ժամկետ 20000 կմ կամ 2 տարի, մինչև պայմաններից որևէ մեկի շուտ լրանալը:

4.Փոխված հանգույցների շահագործման երաշխիքային ժամկետը 5000 կմ:

5.Հիմնական նորոգում անցած ագրեգատներին տրված երաշխիքային ժամկետները գործելու են արտադրող գործարանների կողմից հաստատված երաշխիքային գրքույկներում նշված ցուցիչների պահպանման դեպքում:

6.Նորոգումները պետք է համապատասխանեն նորոգող գործարանների կողմից կազմված նորոգման և տեխսպասարկման ուղեցույցի պահանջներին:

7.Նորոգման ժամանակ փոխարինված ագրեգատները և հանգույցները նորոգող ընկերությունը պարտավոր է հետ վերադարձնի պատասխանատու ստորաբաժանմանը ըստ կարգագրերի:

8.Նորոգումները իրականացվում են ընկերությունների կողմից ներկայացված արատավորման ակտերի հիման վրա՝ ՀՀ ԶՈՒ ՍՎ -ի կողմից հաստատվելուց հետո:

9.Նորոգող ընկերությունների կողմից մեքենաները կամ ագրեգատները պետք է ընդունվեն փաստացի տեխնիկական վիճակով:

10.Ավտոմեքենաների և ագրեգատների տեղափոխումը մինչև նորոգումը և նորոգումից հետո կատարել ՀՀ ԶՈՒ - ի միջոցով:

| | ՀԻՆՈ 700ավտոմեքենայի (իր մոդիֆիկացիաներով) նորոգման աշխատանքների անվանացանկը | | |
|---|---|---|---|
| Հ.Հ | Անվանումը | Չ.Մ | Միավորի գինը ՀՀ դրամ |
| 1 | Շարժիչի տեղադրում | հատ | 105,000 |
| 2 | Շարժիչի հանում | հատ | 95,000 |
| 3 | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 198,000 |
| 4 | Շարժիչի քանդում և արատավորում | հատ | 105,000 |
| 5 | Շարժիչի բլոկի ատենդային ստուգում | հատ | 155,000 |
| 6 | Շարժիչի բլոկի մաքրում և ներկում | հատ | 39,000 |
| 7 | Շարժիչի /առանց բլոկի/ մասերի մաքրում | հատ | 24,000 |
| 8 | Շարժիչի հավաքում | հատ | 565,000 |
| 9 | Շարժիչի բլոկի դիմացի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 10 | Շարժիչի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների /միջադիրներ, խցիչներ/ հանում և տեղադրում | հատ | 120,000 |
| 11 | Շարժիչի 1 հատ հիմնական ներդրակի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 12 | Շարժիչի 1 հատ շարժաթևային ներդրակի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 13 | Շարժիչի 1 կոմպլեկտ գլանի, մխոցի, մխոցամատի, մխոցային օղերի հանում և տեղադրում | հատ | 98,000 |
| 14 | Շարժիչի 1 հատ շարժաթևի ականոցի հանում և տեղադրում | հատ | 14,000 |
| 15 | Շարժիչի յուղի պոմպի ստենդավորում | հատ | 39,000 |
| 16 | Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում | հատ | 39,000 |
| 17 | Շարժիչի գլխիկի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 18 | Շարժիչի գլխիկի կափարիչի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 5,500 |
| 19 | Շարժիչի գլխիկի հանում և տեղադրում | հատ | 215,000 |
| 20 | Շարժիչի գլխիկի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 21 | Շարժիչի գլխիկի կափարիչի ամրացման հեղյուսի հանում և տեղադրում | հատ | 2,000 |
| 22 | Շարժիչի գլխիկի 1 հատ արտածման փականի հանում և տեղադրում | հատ | 11,000 |
| 23 | Շարժիչի գլխիկի 1 հատ ներածման փականի հանում և տեղադրում | հատ | 11,000 |
| 24 | Շարժիչի գլխիկի 1 հատ փականի յծակի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 25 | Շարժիչի գլխիկի փականի 1 հատ արտաքին զսպանի հանում և տեղադրում | հատ | 2,200 |
| 26 | Շարժիչի գլխիկի փականի 1 հատ ներքին զսպանի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 27 | Շարժիչի գլխիկի փականի մանեկի հանում և տեղադրում | հատ | 1,000 |
| 28 | Շարժիչի թափարգելի համակարգի հանում և տեղադրում | հատ | 43,000 |
| 29 | Շարժիչի ներածման խողովակի հանում և տեղադրում | հատ | 12,000 |
| 30 | Շարժիչի ներածման կոլեկտորի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 49,000 |
| 31 | Շարժիչի ներածման կոլեկտորի հանում և տեղադրում | հատ | 155,000 |
| 32 | Շարժիչի բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում | հատ | 31,000 |
| 33 | Շարժիչի բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում | հատ | 15,000 |
| 34 | Շարժիչի բաշխիչ լիսեռի ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 9,000 |
| 35 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում | հատ | 9,000 |
| 36 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում | հատ | 49,000 |
| 37 | Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 155,000 |
| 38 | Շարժիչի ծնկաձև լիսեռի հանում և տեղադրում | հատ | 75,000 |
| 39 | Շարժիչի ծնկաձև լիսեռի 1 հատ ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 40 | Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 2,500 |
| 41 | Շարժիչի ծնկաձև լիսեռի վերևի և ներքևի կիսաօղերի հանում և տեղադրում | հատ | 4,400 |
| 42 | Շարժիչի ծնկաձև լիսեռի փոկանիվի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 43 | Շարժիչի թողարկիչ կոլեկտորի հանում և տեղադրում | հատ | 155,000 |
| 44 | Շարժիչի ջրի խողովակի հանում և տեղադրում | հատ | 14,000 |
| 45 | Շարժիչի թափանիվի հանում և տեղադրում | հատ | 55,000 |
| 46 | Շարժիչի թափանիվի ատամնավոր օղագոտու հանում և տեղադրում | հատ | 5,000 |
| 47 | Շարժիչի թափանիվի քարտերի հանում և տեղադրում | հատ | 29,000 |
| 48 | Շարժիչի հիդրոկցորդիչի հանում և տեղադրում | հատ | 42,000 |
| 49 | Շարժիչի հիդրոկցորդիչի անջատիչի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 50 | Շարժիչի քարտերի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 51 | Շարժիչի քարտերի 1 հատ խողովակի հանում և տեղադրում | հատ | 800 |

| | | | |
|---|---|---|---|
| 52 | Շարժիչի յուղի կոշտ մաքրման զտիչի էլեմենտի հանում և տեղադրում | հատ | 1,600 |
| 53 | Շարժիչի յուղի մաքրման զտիչի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 54 | Յուղի ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 47,000 |
| 55 | Շարժիչի յուղի լցավորման խողովակառստի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 56 | Շարժիչի յուղի լցավորման խողովակառստի կափարիչի հանում և | հատ | 0 |
| 57 | Շարժիչի յուղի մակարդակի ցուցիչի հանում և տեղադրում | հատ | 1,200 |
| 58 | Շարժիչի 1 հատ փոկի հանում և տեղադրում | հատ | 1,200 |
| 59 | Շարժիչի փորձարկման ծառայություն | հատ | 1,200 |
| 60 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 61 | Շարժիչի առջևի խտարուկի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 62 | Շարժիչի հետևի խտարուկի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 63 | Շարժիչի փականի ուղղորդող 1 հատ վռանի հանում և տեղադրում | հատ | 3,400 |
| 64 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 65 | Վառելիքի բաքի վերանորոգում | հատ | 10,000 |
| 66 | Վառելիքի բաքի ամրացման 1 հատ միջադիրի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 67 | Վառելիքի բաքի ամրացման 1 հատ ամրակապի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 68 | Վառելիքի բաքի մաքրում և ներկում | հատ | 19,000 |
| 69 | Վառելիքի բաքի ամրացման բարձակի հանում և տեղադրում | հատ | 2,000 |
| 70 | Վառելիքի խողովակաշարերի հանում և տեղադրում | հատ | 63,000 |
| 71 | Վառելիքի հետադարձ փականի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 72 | Վառելիքի ընդհանուր ուղի (քանոնի) հանում և տեղադրում | հատ | 45,000 |
| 73 | Վառելիքի խողովակի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 74 | Վառելիքի համակարգի ձեռքի պոմպի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 75 | Վառելիքի 1 հատ առբերման խողովակի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 76 | Վառելիքի 1 հատ հեռացման խողովակի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 77 | Վառելիքի 1 հատ բարձր ճնշման խողովակի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 78 | Վառելիքի 1 հատ ցամաքուրդային խողովակի հանում և տեղադրում | հատ | 1,700 |
| 79 | Վառելիքի բաքի տարաթողման փականի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 80 | Վառելիքի նախամաքրման զտիչի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 81 | Վառելիքի նախամաքրման զտիչի բաժակի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 82 | Վառելիքի վերջնամաքրման զտիչի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 83 | Վառելիքի վերջնամաքրման զտիչի թասակի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 84 | Վառելիքի վերջնամաքրման զտիչի իրանի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 85 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում | հատ | 49,000 |
| 86 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 87 | ԲՃՎՄ-ի հանում և տեղադրում | հատ | 49,000 |
| 88 | ԲՃՎՄ-ի ստենդային ստուգում | հատ | 155,000 |
| 89 | ԲՃՎՄ-ի քանդում, հանգույցների, դետալների մաքրում, լվացում և սեղմված օդով փչում և հավաքում | հատ | 84,000 |
| 90 | ԲՃՎՄ-ի նորոգում | հատ | 585,000 |
| 91 | Վառելիքի 1 հատ բոցամուղի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 92 | Վառելիքի 1 հատ բոցամուղի խողովակի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 93 | Վառելիքի 1 հատ բոցամուղի փոշարարի հանում և տեղադրում | հատ | 25,000 |
| 94 | Վառելիքի 1 հատ բոցամուղի ստենդային ստուգում | հատ | 25,000 |
| 95 | Վառելիքի 1 հատ բոցամուղի վերանորոգում | հատ | 275,000 |
| 96 | Վառելիքի սեպերատոր զտիչի տեղադրում | հատ | 39,000 |
| 97 | Արագարարի ոտնակի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 98 | Արագարարի աքսելատորի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 99 | Արագարարի աքսելատորի վերանորոգում | հատ | 31,000 |
| 100 | Օդի ընդունման խողովակի թասակի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 101 | Օդի ընդունման խողովակի հանում և տեղադրում | հատ | 1,600 |
| 102 | Օդատար խողովակի հանում և տեղադրում | հատ | 7,900 |
| 103 | Կիպարար խցուկի հանում և տեղադրում | հատ | 2,000 |
| 104 | Օդի զտիչի մեծ էլեմենտի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 105 | Օդի զտիչի փոքր էլեմենտի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 106 | Օդի մեծ և փոքր էլեմենտների սեղմված օդով փչում | հատ | 2,800 |
| 107 | Օդի զտիչի կորպուսի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 108 | Օդի զտիչի կորպուսի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 900 |
| 109 | Օդի զտիչի ընդունման ճկափողի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 110 | Օդամաքրիչ ֆիլտրող տարրերի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 111 | Վառելիքի 1 հատ բոցամուղի ծրագրավորում | հատ | 53,000 |
| 112 | Տուրբաճնշակի հանում և տեղադրում | հատ | 75,000 |
| 113 | Տուրբաճնշակի յուղի խողովակի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 114 | Տուրբաճնշակի օդի հովացման խողովակի հանում և տեղադրում | հատ | 6,300 |
| 115 | Օդի զտիչի ճկափողի հանում և տեղադրում | հատ | 10,000 |

| | | | |
|---|---|---|---|
| 116 | Խտացուցիչի հանում և տեղադրում | հատ | 18,000 |
| 117 | Խտացուցիչի վերանորոգում | հատ | 16,000 |
| 118 | Խտացուցիչի 1 հատ ընդունման խողովակի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 119 | Խտացուցիչի էժեկտորի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 120 | Խտացուցիչի 1 հատ միջադիրի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 121 | Խտացուցիչի անուրի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 122 | Օժանդակ արգելակի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 123 | Օժանդակ արգելակի գլանի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 124 | Օժանդակ արգելակի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 125 | Օժանդակ արգելակի բարձակի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 126 | Խտացուցիչի մաքրում և ներկում | հատ | 22,000 |
| 127 | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 53,000 |
| 128 | Ռադիատորի վերանորոգում | հատ | 85,000 |
| 129 | Ռադիատորի հովացուցիչի կցորդման համակարգի հանում և տեղադրում | հատ | 21,000 |
| 130 | Շարժիչի հովհարի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 131 | Ռադիատորի կախոցի 1 հատ բարձիկի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 132 | Ռադիատորի կախոցի շրջանակի վերանորոգում | հատ | 10,000 |
| 133 | Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 134 | Ռադիատորի 1 հատ ճկափողի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 135 | Ջրահեռացման խողովակատի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 136 | Ռադիատորի ամրացման ձգաձողի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 137 | Ընդարձակման բաքի ամրակապի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 138 | Ընդարձակման բաքի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 139 | Ընդարձակման բաքի խողովակի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 140 | Ջրի խողովակի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 141 | Հեղուկաթափ ծորակի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 142 | Ռադիատորի խցանի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 143 | Շարժիչի ջրի պոմպի վերանորոգում | հատ | 48,000 |
| 144 | Շարժիչի ջրի պոմպի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 145 | Ջրի պոմպի փոկանիվի հանում և տեղադրում | հատ | 3,900 |
| 146 | Փոկանիվի 1 հատ առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 147 | Օդափոխիչի թևանիվի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 148 | Թերմոստատի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 149 | Օդորակիչի սառեցման հեղուկի (ֆրյոն) ստուգում | հատ | 5,100 |
| 150 | Օդորակիչի սառեցման հեղուկի (ֆրյոն) լիցքավորում | հատ | 58,000 |
| 151 | Օդորակիչի կոմպրեսորի վերանորոգում | հատ | 21,000 |
| 152 | Օդորակիչի կոմպրեսորի հանում և տեղադրում | հատ | 54,000 |
| 153 | Ինտերկուլերի հանում և տեղադրում | հատ | 43,000 |
| 154 | Ինտերկուլերի վերանորոգում | հատ | 105,000 |
| 155 | Ինտերկուլերի փողրակի անուրի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 156 | Հովացնող համակարգի հովացնող հեղուկի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 157 | Ռադիատորի ներքևի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 158 | Ռադիատորի վերևի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 159 | Կցորդման համակարգի հանում և տեղադրում | հատ | 25,000 |
| 160 | Կցորդման գլխավոր գլանի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 161 | Կցորդման գլխավոր գլանի վերանորոգում | հատ | 16,000 |
| 162 | Կցորդիչի ոտնակի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 163 | Կցորդիչի ոտնակի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 164 | Կցորդիչի անջատման ձգաձողի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 165 | Կցորդման 1 հատ սկավառակի վրադիրի հանում և տեղադրում | հատ | 42,000 |
| 166 | Տարվող երկրորդ սկավառակի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 167 | Սեղմող առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 168 | Կցորդման անջատման երկժանիի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 169 | Կցորդման անջատման երկժանիի լիսեռի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 170 | Կցորդման անջատման երկժանիի վերանորոգում | հատ | 10,000 |
| 171 | Կցորդման հիդրոհաղորդակ համակարգի հեղուկի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 172 | Կցորդման շարժաբերի համակարգի լիցքավորում, գլխավոր գլանի հեղուկի մակարդակի կարգավորում | հատ | 5,100 |
| 173 | Կցորդման ոտնակի հետձգման զսպանակի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 174 | Պնևմոհիդրոուժեղարարի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 175 | Պնևմոհիդրոուժեղարարի վերանորոգում | հատ | 31,000 |
| 176 | Պնևմոհիդրոուժեղարարի մխոցի հրիչի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 177 | Պնևմոհիդրոուժեղարարի օդի մուտքերման խողովակի հանում և տեղադրում | հատ | 5,100 |

| | | | |
|---|---|---|---|
| 178 | Կցորդման համակարգի յուղի խողովակի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 179 | Փոխանցման տուփի հանում և տեղադրում | հատ | 160,000 |
| 180 | Փոխանցման տուփի քանդում և արատավորում | հատ | 64,000 |
| 181 | Փոխանցման տուփի հավաքում | հատ | 265,000 |
| 182 | Փոխանցման տուփի առաջնային լիսեռի առջևի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 183 | Փոխանցման տուփի առաջնային և երկրորդային լիսեռների միջև ընկած առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 184 | Փոխանցման տուփի առջևի առանցքակալի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 185 | Փոխանցման տուփի առաջնային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 186 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 187 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի առաջին փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 9,100 |
| 188 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի երկրորդ փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 8,100 |
| 189 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի երրորդ փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 11,000 |
| 190 | Փոխանցման տուփի առաջնային լիսեռի չորրորդ ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 8,100 |
| 191 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի հետին ընթացքի փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 5,700 |
| 192 | Փոխանցման տուփի 1 կոմպլեկտ համաժամիչի հանում և տեղադրում | հատ | 45,000 |
| 193 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի գնդիկավոր առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 194 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի 1 հատ հոլովակավոր առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 3,900 |
| 195 | Փոխանցման տուփի երկրորդային լիսեռի ատամնանիվի 1 հատ ականոցի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 196 | Կարդանի միացման կցաշուրթի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 197 | Փոխանցման տուփի միջանկա լիսեռի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 198 | Փոխանցման տուփի միջանկա լիսեռի երրորդ փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 199 | Փոխանցման տուփի միջանկա լիսեռի չորրորդ փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 990 |
| 200 | Փոխանցման տուփի միջանկա լիսեռի 1 հատ առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 201 | Փոխանցման տուփի հետին ընթացքի ատամնանիվների բլոկի 1 հատ հոլովակավոր առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 202 | Փոխանցման տուփի հետևի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 35,000 |
| 203 | Բարձր փոխանցումների փոխարկման մեխանիզմի 1 հատ երկժանիի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 204 | Փոխանցումների փոխարկման մեխանիզմի  երկժանիի 1 հատ կոթի հանում և տեղադրում | հատ | 5,700 |
| 205 | Փոխանցումների փոխանցման տուփի բռնակի հանում և տեղադրում | հատ | 28,000 |
| 206 | Փոխանցումների փոխանցման լծակի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 207 | Փոխանցման տուփի առաջնային լիսեռի կափարիչի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 208 | Փոխանցման տուփի առջևի պատյանի և միջադիրի հանում և տեղադրում | հատ | 2,500 |
| 209 | Առաջնային լիսեռի խցաբռնի հանում և տեղադրում | հատ | 12,000 |
| 210 | Փոխանցման տուփի ճոպանի հանում և տեղադրում | հատ | 19,000 |
| 211 | Փոխանցման տուփի յուղի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 212 | Փոխանցման տուփի յուղի պոմպի ռոտորի հանում և տեղադրում | հատ | 29,000 |
| 213 | Փոխանցման տուփի բռնակի ձգանի վերանորոգում | հատ | 19,000 |
| 214 | Փոխանցման տուփի և շարժիչի միացման կափարիչի հանում և տեղադրում | հատ | 31,000 |
| 215 | Փոխանցման տուփի մոլորակային փոխանցման ատամնանիվի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 216 | Փոխանցման տուփի մոլորակային փոխանցման համաժամիչի հանում և տեղադրում | հատ | 8,100 |
| 217 | Փոխանցման տուփի փականի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 218 | Փոխանցման տուփի փոխանցման եղանի ներդիրի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 219 | Փոխանցման տուփի օդի փականի հանում և տեղադրում | հատ | 1,800 |
| 220 | Փոխանցման տուփի օդի փականի վերանորոգում | հատ | 37,000 |

| | | | |
|---|---|---|---|
| 221 | Հետնի կափարիչի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 222 | Հետնի կափարիչի կցաշուրթի խտաբունի հանում և տեղադրում | հատ | 3,100 |
| 223 | Հետնի կափարիչի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 3,400 |
| 224 | Հետնի կափարիչի մետաղյա միջադիրի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 225 | Բարձր փոխանցումների փոխանցման մեխանիզմի 1 կոմպլեկտ համաժամիչի հանում և տեղադրում | հատ | 8,100 |
| 226 | Բարձր փոխանցումների փոխանցման մեխանիզմի 1 հատ խողովակի հանում և տեղադրում | հատ | 2,200 |
| 227 | Բարձր փոխանցումների փոխանցման մեխանիզմի էլկտրական անջատիչի հանում և տեղադրում | հատ | 2,900 |
| 228 | Փոխանցման տուփի գտիչի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 229 | Փոխանցման տուփի մաքրում և ներկում | հատ | 26,000 |
| 230 | Փոխանցման տուփի տարվող լիսեռի կցաշուրթի առանցքային բացակի ստուգում | հատ | 10,000 |
| 231 | Մեծ կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 232 | Փոքր կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 233 | Մեծ կարդանային լիսեռի մաքրում և ներկում | հատ | 37,000 |
| 234 | Փոքր կարդանային լիսեռի մաքրում և ներկում | հատ | 26,000 |
| 235 | 1 հատ կցաշուրթի հանում և տեղադրում | հատ | 8,100 |
| 236 | 1 հատ խաչարդի հանում և տեղադրում | հատ | 21,000 |
| 237 | Փոքր կարդանային լիսեռի վերանորոգում, բալանսավորում | հատ | 200,000 |
| 238 | Մեծ կարդանային լիսեռի վերանորոգում, բալանսավորում | հատ | 400,000 |
| 239 | Առջևի կամրջակի հեծանի հանում և տեղադրում | հատ | 105,000 |
| 240 | Առջևի կամրջակի հեծանի մաքրում և ներկում | հատ | 37,000 |
| 241 | Դարձումային բռունցքի հանում և տեղադրում | հատ | 18,000 |
| 242 | Դարձումային բռունցքի լծակի հանում և տեղադրում | հատ | 8,600 |
| 243 | Սռնացցի ականոցի հանում և տեղադրում | հատ | 28,000 |
| 244 | Հեծանի կունդի մեջի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 1,800 |
| 245 | Հեծանի կունդի դրսի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 246 | Հեծանի կունդի խտաբունի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 247 | Զգաձողի 1 հատ ծայրապանակի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 248 | Ստաբիլիզատորի հանում և տեղադրում | հատ | 26,000 |
| 249 | Ստաբիլիզատորի 1 հատ ռետինի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 250 | Ստաբիլիզատորի 1 հատ շարժաթևի հանում և տեղադրում | հատ | 3,400 |
| 251 | Առջևի կամրջակի 1 հատ հարվածամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 252 | Առջևի կամրջակի 1 հատ զսպանի հանում և տեղադրում | հատ | 46,000 |
| 253 | Առջևի զսպանի երկաթակապի հանում և տեղադրում | հատ | 8,600 |
| 254 | Առջևի զսպանի մատի և վռանի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 255 | Առջևի 1 հատ զսպանի քանդում և արատավորում | հատ | 10,000 |
| 256 | Առջևի 1 հատ զսպանի մաքրում և ներկում | հատ | 10,000 |
| 257 | Առջևի 1 հատ զսպանի հավաքում | հատ | 10,000 |
| 258 | Առջևի զսպանի 1 հատ թերթիկի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 259 | Առջևի զսպանի 1 հատ ճարմանդի հանում և տեղադրում | հատ | 26,000 |
| 260 | Հետնի կամրջակի հանում և տեղադրում | հատ | 132,000 |
| 261 | Հետնի կամրջակի քանդում և արատավորում | հատ | 32,000 |
| 262 | Հետնի կամրջակի հավաքում | հատ | 215,000 |
| 263 | Հետնի կամրջակի մաքրում և ներկում | հատ | 42,000 |
| 264 | Հետնի կամրջակի 1 հատ կիսասռնիի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 265 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտորի) 1 կոմպլեկտ սատելիտի հանում և տեղադրում | հատ | 85,000 |
| 266 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցմանի (ռեդուկտորի) խաչարդի հանում և տեղադրում | հատ | 27,000 |
| 267 | Հետնի կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 268 | Հետնի կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի կարգավորման մանեկի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 269 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ հանում և տեղադրում | հատ | 85,000 |
| 270 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ քանդում և արատավորում | հատ | 21,000 |
| 271 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ հավաքում | հատ | 95,000 |
| 272 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տանող և տարվող ատամնանիվների հանում և տեղադրում | հատ | 27,000 |
| 273 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ տարվող կոնային ատամնանիվի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 12,000 |

| | | | |
|---|---|---|---|
| 274 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ 1 հատ հոլովակավոր առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 275 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ առանցքակալի բաժակի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 276 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ առանցքակալի բաժակի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 277 | Հետնի կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ կցաշուրթի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 278 | Դիֆերենցիալի բլոկավորման մեխանիզմի աշխատանքի ստուգում | հատ | 10,000 |
| 279 | Հետնի կամրջակի յուղի լցավորում | հատ | 1,500 |
| 280 | Հետնի կամրջակի ծնիչի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 281 | Հետնի կամրջակի 1 զսպանի հանում և տեղադրում | հատ | 95,000 |
| 282 | Հետնի կամրջակի 1 զսպանի քանդում և հավաքում | հատ | 21,000 |
| 283 | Հետնի կամրջակի 1 զսպանի 1 հատ երկաթակապի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 284 | Կամրջակի 1 հատ ռեակտիվ ձողի հանում և տեղադրում | հատ | 26,000 |
| 285 | Կամրջակի 1 հատ ռեակտիվ ձողի վերանորոգում | հատ | 27,000 |
| 286 | Կամրջակի 1 հատ ռեակտիվ ձողի 1 վռանի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 287 | Կամրջակի 1 հատ ռեակտիվ ձողի 1 հատ մատի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 288 | Հետնի զսպանի քանդում և արատավորում | հատ | 16,000 |
| 289 | Հետնի զսպանի մաքրում և ներկում | հատ | 63,000 |
| 290 | Հետնի զսպանի հավաքում | հատ | 16,000 |
| 291 | Հետնի զսպանի 1 հատ թերթիկի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 292 | Զսպանի արգելատի հանում և տեղադրում | հատ | 12,000 |
| 293 | Միջանկյալ կամրջակի հանում և տեղադրում | հատ | 115,000 |
| 294 | Միջանկյալ կամրջակի քանդում և արատավորում | հատ | 42,000 |
| 295 | Միջանկյալ կամրջակի մաքրում և ներկում | հատ | 42,000 |
| 296 | Միջանկյալ կամրջակի 1 հատ կիսաառնիի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 297 | Միջանկյալ կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 9,100 |
| 298 | Միջանկյալ կամրջակի 1 հատ ներքին առանցքակալի հանում և | հատ | 13,000 |
| 299 | Միջանկյալ կամրջակի 1 հատ արտաքին առանցքակալի կարգավորման մանեկի հանում և տեղադրում | հատ | 2,100 |
| 300 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ հանում և տեղադրում | հատ | 85,000 |
| 301 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ քանդում և արատավորում | հատ | 25,000 |
| 302 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ հավաքում | հատ | 129,000 |
| 303 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտոր/ տանող և տարվող ատամնանիվների հանում և տեղադրում | հատ | 25,000 |
| 304 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ տարվող կոնային ատամնանիվի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 12,000 |
| 305 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ 1 հատ հոլովակավոր առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 306 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ առանցքակալի բաժակի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 307 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ առանցքակալի բաժակի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 6,300 |
| 308 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ առջևի կցաշուրթի հանում և տեղադրում | հատ | 22,000 |
| 309 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ հետնի կցաշուրթի հանում և տեղադրում | հատ | 21,000 |
| 310 | Միջանկյալ կամրջակի գլխավոր փոխանցման /ռեդուկտորի/ հետնի կցաշուրթի առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 311 | Միջանկյալ կամրջակի յուղի լցավորում | հատ | 1,500 |
| 312 | Շրջանակի մաքրում և ներկում | հատ | 159,000 |
| 313 | Առջևի թափարգելի վերանորոգում | հատ | 65,000 |
| 314 | Առջևի թափարգելի հանում և տեղադրում | հատ | 26,000 |
| 315 | Առջևի թափարգելի ռռնատեղի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 316 | Շրջանակի վիճակի ստուգում | հատ | 10,000 |
| 317 | 1 հատ բալոնի վռանի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 318 | 1 հատ բալոնի վերանորոգում | հատ | 39,000 |
| 319 | Բալոնի կափարիչի միջադիրի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 320 | Բալոնների լիսեռի հանում և տեղադրում | հատ | 65,000 |

| | | | |
|---|---|---|---|
| 321 | 1 հատ անիվի հանում և տեղադրում | հատ | 3,900 |
| 322 | 1 հատ անիվի քանդում և հավաքում | հատ | 6,300 |
| 323 | 1 հատ անիվի անվահեցի մաքրում և ներկում | հատ | 12,000 |
| 324 | 1 հատ անիվի բալանսավորում | հատ | 12,000 |
| 325 | 1 հատ անիվի փակային օդի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 326 | 1 հատ անվախուցի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 327 | 1 հատ անվախուցի վերանորոգում | հատ | 2,800 |
| 328 | 1 հատ ֆիլպերի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 329 | 1 հատ արգելակման թմբուկի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 330 | Անվակունդի 1 հատ կափարիչի հանում և տեղադրում | հատ | 590 |
| 331 | Անվակունդի կափարիչի 1 հատ միջադիրի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 332 | Անվակունդի 1 հատ առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 333 | Անվակունդի 1 հատ մանեկի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 334 | Անվակունդի 1 հատ խտաբուկի հանում և տեղադրում | հատ | 2,200 |
| 335 | Անվադողի 1 հատ  փականի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 336 | Անիվների կունդերի առանցքակալների վիճակի ստուգում | հատ | 2,800 |
| 337 | 1 հատ անվակունդի քայքուղում | հատ | 16,000 |
| 338 | Ղեկային համակարգի հանում և տեղադրում | հատ | 32,000 |
| 339 | Ղեկային մեխանիզմի վերանորոգում | հատ | 865,000 |
| 340 | Ղեկանիվի հանում և տեղադրում | հատ | 7,500 |
| 341 | Ղեկային համակարգի 1 հատ առանցքակալի հանում և տեղադրում | հատ | 2,800 |
| 342 | Ղեկային համակարգի 1 հատ կարդանային խաչարդի (առանցքակալներով) հանում և տեղադրում | հատ | 95,000 |
| 343 | Ղեկային համակարգի հիդրոուժեղարար պոմպի վերանորոգում | հատ | 269,000 |
| 344 | Ղեկային համակարգի հիդրոուժեղարար պոմպի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 345 | Ղեկային հիդրոուժեղարարի 1 հատ խողովակաշարի բարձր ճնշման կարճ ճկափողի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 346 | Ղեկային հիդրոուժեղարարի խողովակաշարի 1 հատ խողովակի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 347 | Ղեկային մեխանիզմի արորիկի ձգաձողի հանում և տեղադրում | հատ | 24,000 |
| 348 | Ղեկաշրջանակի ձգաձողի 1 հատ ծայրոցի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 349 | Ձգաձողի ամրացման հանգույցի հանում և տեղադրում | հատ | 45,000 |
| 350 | Ղեկային մեխանիզմի արորիկի ձգաձողի 1 հատ ծայրոցի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 351 | Ղեկային ձգաձողի ծայրոցի  1 հատ պաշտպանիչ պատյանի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 352 | 1 հատ գնդավոր մատի հանում և տեղադրում | հատ | 21,000 |
| 353 | 1 հատ ղեկային համակարգի հեղուկի ֆիլտրի հանում և տեղադրում | հատ | 350 |
| 354 | Ղեկային համակարգի հիդրոուժեղարարի համակարգի  արտամղում | հատ | 2,800 |
| 355 | Արգելակման համակարգի 1 հատ կոճղակի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 356 | Անիվի 1 հատ մակադրակի հանում և տեղադրում | հատ | 2,200 |
| 357 | Արգելակի 1 հատ գլանի հանում և տեղադրում | հատ | 16,000 |
| 358 | Արգելակի 1 հատ վահանի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 359 | Արգելակի 1 հատ ձգիչ զսպանի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 360 | Արգելակի 1 հատ կոճղակի առնիի հանում և տեղադրում | հատ | 940 |
| 361 | Արգելակման 1 հատ գլխավոր գլանի վերանորոգում | հատ | 85,000 |
| 362 | Արգելակի ոտնակի հանում և տեղադրում | հատ | 13,000 |
| 363 | Արգելակի ոտնակի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 400 |
| 364 | Արգելակի շարժաբերի ձգիչ զսպանի հանում և տեղադրում | հատ | 1,500 |
| 365 | Պնևմոարգելակի կոմպրեսորի վերանորոգում | հատ | 38,000 |
| 366 | Պնևմոարգելակի կոմպրեսորի հանում և տեղադրում | հատ | 10,000 |
| 367 | Արգելակման գլխավոր փականի վերանորոգում | հատ | 48,000 |
| 368 | Արգելակման փականի հանում և տեղադրում | հատ | 5,100 |
| 369 | Եռակի պաշտպանիչ փականի վերանորոգում | հատ | 38,000 |
| 370 | Արգելակման համակարգի ռետինե խողովակի հանում և տեղադրում | հատ | 6,300 |
| 371 | Արգելակման 1 հատ բաժանարարի վերանորոգում | հատ | 58,000 |
| 372 | Արգելակման գլանի վերանորոգում | հատ | 69,000 |
| 373 | Ձեռքի արգելակման գլանի վերանորոգում | հատ | 55,000 |
| 374 | Արգելակման էներգաակումուլյատորի վերանորոգում | հատ | 86,000 |
| 375 | Արգելակման էներգաակումուլյատորի սեղմակի վերանորոգում | հատ | 56,000 |
| 376 | Արգելակման համակարգի 1 հատ յիսեռի հանում և տեղադրում | հատ | 4,500 |
| 377 | Օդի ճնշման կարգավորիչ փականի վերանորոգում | հատ | 79,000 |
| 378 | Օդի ճնշման կարգավորիչ փականի հանում և տեղադրում | հատ | 53,000 |
| 379 | 1 հատ օդամբարի հանում և տեղադրում | հատ | 32,000 |
| 380 | Օդամբարի 1 հատ խառնած ծորակի հանում և տեղադրում | հատ | 9,100 |